

Փըլա՛ծ ու լո՛ւռ կը սպասեն սուգի առջի գիշերին՝
 Որ լուսնին տակ արտասուեն աճիւնն իրենց թանալով:
 Տանիքն անոնց փըլցուցին ներսը վառուող ճրագին վրայ.
 Դըռներն հլու, զոր զեփիւռն իսկ իր շունչով կը բանար,
 Ինկան ջախջախ խուժանին բիբերուն տակ արիւնոտ:
 Եւ արդ պատերը ժռատ ծընօտի պէս կը ցըցուին,
 Որոնց մէջէն խոյս կու տան հոգիներ բոյլ բոյլ երկինք:
 Արտերուն վրայ մոխրակո՛յտ, իսկ դիակնե՛ր ճամբուն վրայ,
 Այն ճամբուն վրայ ըսպիտակ՝ ուրկէ ժիր ցեղն Արամեան
 Արեւմուտքի աստուածներն, յարաճուն միտքն Եւրոպին
 Ջորիներուն բեռցուցած տարաւ բաժնել Ասիոյ:
 Աղբիւրներուն քով զոհե՛ր, ակօսներուն մէջ զոհե՛ր.
 Եւ հոն, դիմա՛ցն, ուր ահա արեւը մայր կը մըտնէ,
 Սեպ ժայռին դէմ խաչեր են եօթը այրեր մերկանդամ.
 Արիւնն իրենց մազերէն (օտարակա՛ն, կ'աղաչեմ),
 Փակե՛ աչքերդ ու միայն եղիր ձայնիս ունկընդիր).
 Արիւնն իրենց ձեռքերէն եւ ոտքերէն բեւեռուած
 Յողին վըրայ կը վազէ վիմուտներն այն ներկելով.
 Կարծես մեկնող արեգակն յուշիկ յուշիկ կ'ընկըղմի
 Մեծ աչքերուն մէջ իրենց՝ սարսափէն բաց մընացած:
 Դահճապետներն հեռացեր են խաւարին մէջ արդէն,
 Խաղաղութի՛նն, Ովսանսա՛ բարձունքներուն վրայ կարմիր...
 Ո՛հ, ծընօտներս ի՛նչ սարսուռ կը կափկափէ. Դարձիր ա՛ջ,
 Եւ տես քաղաքն՝ որ նըստած դաշտերուն սա սուգին մէջ՝
 Դեռ իր սըրտէն կը մըխայ մարդագոհի հնոցի նման:
 Ազատութեան արշալոյսն անոր ճակատը կըճեայ
 Յագիւ եր դեռ բոսորած՝ երբ որ իր յաղթ հիմերուն
 Ներքեւ վիշապի Յամիտեան սասանեց տուտն ու թիկունք.
 Բարբարոսներն այն ատեն արեւուն դէմ թըքնելով՝
 Մահուան սերմերը բըռած մեծախընձիղ արթնցան.
 Եւ քաղաքին մէկ կէսն ալ կործանեց կեսը միւս: